



**Սրբոց Թարգմանչաց աշակերտութիւնը, 2013. կեղոնող Տեսուչ՝ Նորայր Վրդ. Գագագեան**

Նոր մարտահրամերը:

...Ահա թէ ինչո՞ւ այս տօնակատարութիւնը, այս տարեդարձը, 85-ամեայ այս հանգրուանը, հարկ է որ ինքնաքննարկման, հաշուեյարդարի առիջ մը ըլլայ մեզմէ իրաքանչիրին համար... հոգեոր թէ աշխարհական, նոր թափով շարունակելու Դուրեանով սկսուած վեհ գործը:

...Սրբոց Թարգմանչաց Վարժարանի 85-ամեակին առթիւ, Ամել Սանուցի և մեր բոլոր

անդամներուն անունով ի սփիտս աշխարհի, անգամ մը ես մեր սիրոյ, հաւատարմութեան և զօրակցութեան հետ, յարգանքի և երախտագիտական զգացումները կը յայտնենք Երուսաղէմի Ս. Յակուրայ զինուորագրեալ միարանութեան և անոր Գահակալին՝ Ամենապատի Տ. Նորիհան Արք. Մանուկեանին, որոն բարձր հովանառութեան տակ Թարգմանչացը կը շարունակէ իր երթը յաղթական:



(Յապատումներով)

## ՀՈՒՐԵՐ ՎԱՐԺԱՐԱՆԵՆ

❖  
Ա.- ԲԱՅՑՈՒՄ

2014-2015 տարեշրջանին վարժարանս սկսաւ իր 85-րդ ուսումնական տարին: Նախ Սեպտեմբեր 1-ին կատարուեցաւ Վարժարանիս նախարացումը՝ Տեսուչ Տ. Նորայր Վրդ. Գագագեանի բարի գալուստի ջերմ խօսքերով: Ապա ան հակիրճ ակնարկով մը տեղեակ պահեց աշակերտութիւնն ու ներկաները նոր տարեշրջանին կատարուելիք աշխատանքներու և ծրագիրներու մասին: Այսուհետեւ Պրն. Յարութ Պաղամեան աւելի մանրամասնութիւններ տուաւ կարգ մը ծրագիրներու մասին, ինչպէս նաեւ ծանօթացուց յաջորդ օրուան պաշտօնական բացման յայտագիրը:

Սեպտեմբեր 2-ի առաւօտեան տեղի ունեցաւ Սրբոց Թարգմանչաց վարժարանի

պաշտօնական բացման արարողութիւնը, ուր ներկայ էր նաեւ Սրբոց Յակոբեանց Միարանութեան հոգեւորական դասը՝ առաջնորդութեամբ Լուսարարավետ Տ. Սեւան Արք. Ղարիպեանին:: Հիւրերու շարքին էր Հայաստանի Հանրապետութեան Պատուաւոր Հիպատոս Տիար Ցոլակ Մոմձեան. հաւարուած էր նաեւ ծնողներէ ու հարազատներէ բաղկացեալ ստուար հասարակութիւն մը: Նախքան 2014-2015 տարեշրջանի համար նախատեսուած հայկական և այլ դպրոցական ծրագիրներու ներկայացումը, երկսեռ աշակերտութեան, ծանօթացուեցան նաեւ նոր ուսուցիչ-ուսուցչիները իրենց որակատրումներով:

Այս տարի նոյնական աշակերտութեան թիւը որոշ աճ մը արձանագրելով ընդիանուր թիւը հասաւ 157-ի:

## ❖ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 23-ՐԴ ՏԱՐԵՎԱՐ2

Հայաստանի անկախութեան տարեդարձը նշուեցաւ Մեպտեմբեր 19-ին՝ թէ՛ հայերէնի դասապահերուն և թէ՛ կէսօրէ ետք. օրուան զլսաւոր ձեռնարկն էր Հայաստանի նոփրուած ընդիանուր զարգացման և գիտելիքներու մրցոյթը, որ անցաւ մեծ խանդավառութեամբ:

## ❖ - ՄՐԲՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆԴԵՍ

Սրբոց Թարգմանչաց նոփրուած աւանդական հանդիսութիւնը տեղի ունեցաւ 1 Նոյեմբերին: Աշակերտական ուժերով պատրաստուած թատերական պատկերով ներկայացուեցաւ Ե. դարու պատմական մեծ իրադարձութիւնը, ուր մեր մեծագոյն դէմքերը՝ Սահակ Կաթողիկոս, Մեսրոպ Մաշտոց, Վոամշապուհ արքայ և Սույր Թարգմանիչները փոխանցեցին Գրոց Գիտի խորհուրդն ու նշանակութիւնը: Օրուան զլսաւոր պատզամախուն էր աւարտական դասարանի հայերէնի ուսուցիչ Դոկտ. Մինաս Գոճայեան:

Ինչպէս աւանդութիւնն է՝ Թարգմանչաց օրուան նոփրուած պատարագը մատուցեց Վարժարանի տեսուչ Հ. Նորայր Վրդ. Գազագեան:

## ❖ - ԾԱՆՈԹԱՑՄԱՆ ՊՏՈՅՑ Ս. ՅԱԿՈԲԱՅ ԹԱՂԵՐՈՒԽ ՄԷԶ

«Ճանչնանք մեր իինաւորց կառոյցներն ու շրջապատը» կարգախօսով աշակերտական «ներքին» պտոյտը անցաւ աշխոյժ և բարձր տրամադրութեամբ: Տեսուչ Հ. Նորայր Վրդ. Գազագեանի զլսաւորութեամբ աշակերտութիւնը մէկ առ մէկ ծանօթացաւ վանքի զանազան թաղերուն, բնակելի և եկեղեցու ական ու աշխարհիկ կառոյցներուն, անոնց նշանակութեան և պատմական արժեքներուն:

## ❖ - ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Քաջալերելու համար նախաձեռնութեան և պարտականութիւններ ու պարտաւորութիւններ ստանձնելու ոգին, այս տարի նոյնպէս տեղի ունեցաւ աշակերտական խորհուրդի ընտրութեան հետ առնչուած հաւաք և ընտրարշատ, ապա, 10 Նոյեմբերին, գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցաւ Աշակերտական Խորհուրդի յանձնախումբը հետեւեալ կազմով.

Յակոր Յակորեան՝ Ատենապետ  
Տիգրան Էնոյեան՝ Քարտուղար  
Միմն Խաչատրյան՝ Քարտուղար  
Սարին Կեձէգոյեան՝ Գանձապահ  
Նանար Նազգաշեան՝ Հանրային  
Յարաբերութիւն:

## ❖ - ՏԱՐԵԿԱՆ ՊՏՈՅՑ ԵՒ ԶԻԹԱՊՏՈՒԻՂԻ ՔԱՂՈՒՄ

Աշակերտական տարիքի յիշողութեանց մէջ միշտ ալ անմոռաց կը մնան տարեկան պտոյտներն ու դաշտագնացութիւնները, որոնք միաժամանակ դաստիարակիչ նշանակութիւն ունին ուսման ու կրթութեան բարդ ու պատախանատու գործընթացին մէջ:

Այդ զիտակցութեամբ Նոյեմբեր 6-ին տեղի ունեցաւ տարեկան պտոյտը դէպի Թիաբերիա լիճը: Այս ընթացքին աշակերտները ոչ միայն անցուցին հաճելի և ուրախ-գուարթ ժամեր, այլև ծանօթացան կարգ մը պատմական վայրերու Սույր Տեղեաց մէջ:

Սրբոց Թարգմանչաց վարժարանին յատուկ է նաև վանքապատկան կալուածներու մէջ գտնուող ձիթենեաց ծառերու ձիթապտուղ հաւաքելու աւանդութիւնը: Այս առթիւ երկսեռ աշակերտութիւնը մեկնեցաւ վանքապատկան Պարոնտէրի պարտէզները և հաւաքեց մեծ քանակութեամբ մշակուելու պատրաստ կանաչ հատապտուղները:



## ❖ - ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՄՐՑՈՅՑ

Տիար Հայկ Խաչատրյան, Միզուրիէն, ԱՄՆ, իր կնոց՝ Արփինէ Խաչատրյանի անուան նիֆական մրցանակ մը հաստատած էր շարառ դրութեան տարեկան մրցանքի մը համար: Այս տարուան նիւթն էր «Կոմիտասն ու իր դերը Հայ

երաշխտութեան մէջ»: Մասնակցեցան շուրջ ---- աշակերտներ վերի կարգերէն: Առաջին մրցանառ կին արժանացաւ աւարտական դասարանէն Նանար Նազգաշեան, Բ. մրցանալը ստացաւ Սիմոն Խաչատրութեանը (աւարտական), իսկ Երրորդը՝ Սարին Կեճէգուշեան:



## Ը.- ՌԱՖՖԻ ԻՒՐԷՃԵԱՆ ԿԸ ԽՕՍԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ

Նոյեմբեր ամսուն Երուսաղէմ ժամանած էր գաղութիս հարազատ ծնունդ, Թարգմանչաց Վարժարանի շրջանաւարտ Տիար Գրիգոր Իւրէճեան իր երկու զաւակներուն՝ Ռաֆֆիին ու Հրաչյն հետ: Անոնք այցելեցին իրենց հարազատ վայրերը. առիթէն օգոստերով Ռաֆֆի Իւրէճեան շահելան ծանօթութիւն մը տուաւ սահիկներու ցուցադրութեամբ իր՝ Հայրենիքի ու Արցախի մէջ կատարած հեծիկի շրջապտոյսին ու փորձառութեան մասին:



## Թ.- ԶԱՆԱԶԱՆՔ

- Դեկտեմբերին աշակերտութիւնը կը պատրաստուի Ա. կիսամեայ քննութիւններուն և Նոր Տարուայ ու Ա. Ծննդեան արձակուրդներուն, որոնք Երուսաղէմի մէջ տեղի կ'ունենան միւս հայագաղութներէն տարբեր ազգային աւանդութիւններով:

- Ուսումնական տարեշրջանի սկիզբը, դասաւանդութիւններէն անմիջապէս առաջ, տեղի ունեցան նաեւ ուսուցչական ուսումնա-դաստիարակչական նստաշրջաններ, ուր մասնակիցները ներկայացնուիցին ուսումնառութեան մէջ կատարուած նորամուծութիւնները և անոնցմէ օգտուելու հնարաւորութիւնները:

- Նոյեմբեր ամսուն տեղի ունեցաւ ծնողառուցական Ա. հանդիպումը: Մեծ թիւնք ծնողներ ներկայացան համապատասխան ուսուուցիչներուն, լսեցին ու հաղորդակից եղան իրենց զաւակներու ուսումնական վիճակին մասին:



## ԿԵԱՆԸԸ ԺԱՌԱԳԱՌՈՐԾԵՆ ՆԵՐԸ



2014-2015 տարեշրջանին 171-րդ տարին ըլլալով Ժառանգաւորաց Վարժարանը իր հիւրզնկալ դրուերը բացաւ Սեպտեմբեր 4-ին՝ 39 սաներու համար: Իր բացման խօսքին մէջ Ընծայարանի Տեսուչ Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան ընդգծեց Վարժարանին ստանձնած առաքելութիւնը հոգեւոր սպասարկութեան մէջ:

Վերամուսի արարողութեան ներկայ էին Միաբանութեան Ուխտը և ուսուցչական կազմը: Ս. Արոնոյ Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի բացման խօսքին մէջ ըսաւ թէ Ժառանգաւորաց Վարժարանի բացումը տարբեր է այն իմաստով, որ որ հոս սաները ուսման կողքին պիտի ստանան հոգեւոր դաստիարակութիւն և կրթութիւն՝ ի ծառայութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ:



Անցնող ամիսներու ընթացքին Ժառանգաւորացի սաները ունեցան խիստ գրադ ժամանակացոյ մը: Անոնք ուսման առջնթեր շարթուան մէջ օրուան տարբեր ժամերուն մասնակցեցան Եկեղեցական արարողութիւններուն Ա. Յակոբէն ներս, Յ. Յարութեան տաճարի տարբեր խորաններու վրայ, Ա. Հրեշտակապետաց, Ա. Աստուածածին և այլ Եկեղեցիներու մէջ:

